



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 25 ՆՈՅԵՄԲԵՐ, 2019

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, րուր ինձ իմաստութիւն վբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա վիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 139

ԱՍՏՈՒԾՈՅ ԿԱՏԱՐԵԱԼ ԳԻՏՈՒԹԻԻՆՆ ՈՒ ՀՈԳԱԾՈՒԹԻԻՆՆԸ

Տէր, փորձեր ես եւ կը ճանչնաս վիս. Դուն գիտես իմ նիստուկացս, եւ հեռուէն իսկ կը կարդաս մտածումներս: Կը հետեւիս աշխարանքիս ու հանգիստիս, եւ ծանօթ ես բոլոր գործերուս: Դեռ ես բերանս չբացած՝ արդէն գիտես ամէն բան, Տէր: Գիտես անցեալս եւ ապագաս, դուն վիս կազմեր ես, եւ քու պահապան ձեռքդ վրաս դրեր ես: Դուն էիր որ ստեղծեցիր մարմնիս բոլոր անդամները, եւ վիս կազմաւորեցիր մօրս որովայնին մէջ: Քու աչքերդ տեսան վիս՝ երբ դեռ նոյնիսկ կազմաւորուած չէի. եւ ինձի տրուած կեանքի բոլոր օրերը քու գիրքիդ մէջ գրուած էին՝ նոյնիսկ երբ սկիզբ չառած: Փորձէ վիս, ով Աստուած, զննէ սիրտս, քննէ վիս, զննէ մտածումներս, եւ տես, եթէ ես կորուստի տանող ճամբու մէջ եմ, դուն ինքդ վիս յաւիտենական ճամբաներուդ առաջնորդէ:

ՇԱՐԱԿԱՆ-ԱՊՈԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւն ես նեղելոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

*Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ քո հոովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

ՕՐՈՒԲԱՆ ՆԻԹԹԸ



ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՄ ԵՐԵՄԻԱՅԻ

18 ԳԼՈՒԽ

ԵՐԵՄԻԱ ԲՐՈՒՏԻՆ ՏԱՆԸ ՄԷՋ (18:1-12)

Աստուած Իր պարգամները փոխանցելու համար կ'օգտագործէ փարբեր-փարբեր կերպեր, մեթոդներ, երբեմն փեսանելի, երբեմն լսելի, երբեմն կենդանական աշխարհը կամ բնութիւնը, երբեմն նոյնիսկ մարգարէն՝ որպէս օրինակ, ըստ այնմ ժողովուրդին լսելի, հասկնալի ու ըմբռնելի դարձնելու: Հակառակ այս օրինակներուն, ցաւալին այն է, երբ ժողովուրդը կը մնայ անդրդուելի եւ կը շարունակէ իր սխալ ընթացքը: Անոր համար ալ Քրիստոս պիտի ըսէ. «Ով որ ականջ ունի լսելու թող լսէ թէ Հոգին ինչ կ'ըսէ», որ կը նշանակէ, հասկնալու թէ այդ երեւոյթները ինչ կ'ուզեն փոխանցել, այլ խօսքով՝ Աստուծոյ նպատակը մեղաւորին դարձը ու անոր փրկութիւնը է: Եթէ երբեք մեղաւորը անդրադարձաւ ու վերադարձաւ իր սխալ ընթացքէն Տէրը պարտաստ է ներելու եւ ջերելու այն չարիքը ինչ որ ծրագրած է ընել, իսկ եթէ մնաց իր սխալ ընթացքին մէջ եւ Տիրոջ խօսքը մտիկ չըրաւ, Տէրը պիտի չընէ այն բարիքը որ խոստացեր է ընել: Ահա այսպէս կ'ըսէ Տէրը Երեմիա մարգարէին, երբ զինք կը դրկէ բրուպին փունը, որպէսզի մարգարէն փեսնէ, ու փեսածը գայ պարմէ ժողովուրդին, ըսելու համար թէ. «**Ինչպէս կաւը բրուպին ձեռքին մէջ, ուզածը կ'ընէ, նոյնպէս Իսրայէլի փունը Աստուծոյ ձեռքին մէջ այնպէս է, ուզածը ընելու**» (6 հմբ): Այս խօսքը միայն Իսրայէլի չի վերաբերիր, այլ՝ իւրաքանչիւր մարդ արարած այդպէս է Աստուծոյ ձեռքին մէջ: Աստուած, բրուպին նման, կ'ուզէ մեզ որպէս կաւ այնպէս մը շաղել ու ձեւ փայ, որպէսզի պիտանի ըլլանք Անոր փան մէջ, Անոր ներկայութեան: Նոյն օրինակները կը գտնենք Պօղոս Առաքեալի նամակներուն մէջ, Հռոմ 9:21 եւ Բ Տիմոթ 2:20-21:

Տէրը կ'ըսէ Երեմիային. «**Ելիր եւ բրուպին փունը իջիր: Հոն իմ խօսքերս պիտի լսես**» (2 հմբ): Խորքին մէջ Երեմիան պիտի փեսնէ, եւ փեսնելով պիտի իմանայ ու հասկնայ Տիրոջ պարգամը ու փոխանցէ ժողովուրդին: Ասով ցոյց փայլու Աստուծոյ բացարձակ իշխանութիւնը Իր ժողովուրդին, ինչպէս նաեւ մարդկութեան վրայ, ազգերու եւ թագաւորութիւններու: Տակաւին, բրուպի պարագային միայն իշխանութիւն ունի կաւին վրայ, զայն ձեւաւորելու, իսկ կաւը իրեն փրուած է, իսկ Աստուծոյ պարագային եւ Ինքն է կաւը ընողը եւ զայն ձեւաւորողը: Աստուած է որ մարդս սրտեղծեց Իր պարկերով ու նմանութեամբ, Իր ձեռքին գործն ենք մենք, առաւել Աստուած է որ կ'ազատագրէ ու կը փրկէ մեղաւորը:

Հեղաբրբրականօրէն այնպէս կը ներկայացուի թէ Աստուած Իր ծրագիրը կը փոխէ, սակայն, այսպէղ ներկայացուածը այն է որ փոխողը կամ փոխուողը Աստուած չէ, այլ՝ մենք: Որովհետեւ Աստուած էն ողորմած է, էն արդարադար: Ուստի եթէ մեղաւորը դարձի եկաւ Աստուած Իր ողորմութեամբ պիտի ողորմի, եթէ դարձի չեկաւ ու շարունակեց չարութիւն ընել արդարադատութեամբ պիտի դատէ:

Հակառակ Աստուծոյ թելադրութեան, որ ձեր ճամբաներէն դարձէք ու ձեր գործերը ուղղեցէք, անոնք կը մնան անդրդուելի, ու կ'ըսեն. «**մենք մեր խորհուրդներուն երեսէն պիտի երթանք, ու բոլորս ալ մեր չար սրտին կամակորութեանը պէս պիտի ընենք**» (11-12 հմբ):

ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԿԸ ՄԵՐԺԷ ՏԷՐԸ (18:13-17)

Որովհետեւ այս ժողովուրդը պիտի շարունակէ մնալ իր խորհուրդներուն մէջ ու իր չար սրտին կամակորութեան համաձայն ընէ, բան մը որ նոյնիսկ հեթանոսներուն մէջ այսպիսի բան չէ եղած: Այսինքն՝ նոյնիսկ հեթանոսները իրենց ունայն ու սուր չաստուածներուն այսպիսի բան չեն ըրած ինչ որ Իսրայէլը ըրաւ Իր Արարիչին, Կենդանի Աստուծոյ նկարմամբ: Անոր համար ալ Աստուած կ'ըսէ. «**ազգերու մէջ հարցուցէք, այսպիսի բան ո՞վ լսեր է: Երբ Իսրայէլը իր Տէրը մոռցաւ: Ունայնութիւններու խունկ ծխեց: Իրենց հին ճամբաներուն մէջ մոլորեցան, եւ ուրիշ շափողներէ, զարպուղի ճամբաներէ քալեցին**» (13-15 հմբ): Այսպէղ համեմատականը որ կ'ըսէ Լիբանանի ձիւնը եւ վազող ջուրը, անով ցոյց փայլու, թէ կայ մէկը, ան ալ ծարաւի, որ ձգէ վազող ջուրը ու երթայ հոն ուր ջուր չկայ: Միւս կողմէ, եթէ բնութիւնը ինք զիտ է իր դրուածքին համաձայն իր ընելիքը կ'ընէ, բայց Իսրայէլը չկրցաւ ընել ինչ որ իրեն փրուած էր ընելու, այսինքն՝ հաւատարիմ ըլլալու եւ ծառայելու Աստուծոյ եւ ոչ թէ կուռքերու: Ահա այդ իսկ պարճառով. «**անոնց թշուառութեան օրը անոնց կռնակ պիտի ցուցնեն եւ ոչ թէ՛ երես**» (17 հմբ): Արքայապարտութիւն մը, որ Դաւիթ իր սաղմոսներուն մէջ քանիցս կ'արքայապարտի ըսելով երես մի դարձներ ինձմէ, որ կը նշանակէ պիտի չստ, այլ՝ պիտի մերժէ զիրենք: Առաւել եւս, եթէ երբեք Աստուծոյ երեսը լոյս է, եւ երես դարձնել կը նշանակէ այդ լոյսէն զրկուիլ, որ կը նշանակէ խաւարի մէջ ըլլալ, մնալ:

ԴԱԲ ՍԸ ԵՐԵՄԻԱՅԻՆ ԴԷՄ (18:18-23)

Աստուծոյ պարգամները Երեմիայի ճամբով ուղղուած ժողովուրդին հաճելի եւ ընդունելի չէ, ուստի խրատական ու յանդիմանական այս խօսքերը իրենց մէջ կ'արթնցնեն արելութիւն եւ արելութիւնը իր գագաթնակէտին կը հասնի սպաննելու խորհուրդով: Նոյնը պիտի ընէին նաեւ Քրիստոսի պարագային, երբ Օրէնքի ուսուցիչներն ու Փարիսեցիները պիտի միաբանէին Տիրոջ դէմ:

Առաւել եւս, կու գան ըսելու թէ մենք արդէն Օրէնքը, քահանան ու մարգարէն ունինք, որոնք մեզի ուղղութիւն կու տան, ուստի կարիքը չկայ Երեմիային մտիկ ընելու: «**Եկէք, ուրեմն, լեզուով ջախջախենք ու անոր խօսքին ականջ չտանք**» (18 հմբ):

Այս վիճակին դիմաց, Երեմիան կը դիմէ արդար Դաբաուորին՝ Աստուծոյ, որպէսզի երկու կողմերն ալ լսէ, ինչպէս դաբաուորը կ'ընէ. «**ինձի ականջ տուր, ու ինձի հետ վեճ ընողներուն ձայնը լսէ**» (19 հմբ): Մխիթարութիւն մըն է, որ եթէ երբեք ժողովուրդը մարգարէին խօսքերուն մտիկ չըրաւ, Աստուած անոր աղօթքները լսէ:

«**Միթէ աղէկութեան փոխարէն չարիք կը հաբուցուի՞**» (20 հմբ): Չարին դէմ չար, գազանական է: Չարին դէմ բարութիւն, քրիստոնէական է: Բարին դէմ չարութիւն, սատանայական է: Ի՛նչ էր այն աղէկութիւնը որ ըրաւ մարգարէն, «**Քու առջեւդ կայնեցայ որպէսզի անոնց համար բարեխօսութիւն ընեն, ու քու բարկութիւնդ անոնցմէ դարձնեն**» (20 հմբ):

Բայց իրենց այս ըրածին համար, անոնց փոխարէն սովի մայրնէ, սուրին ձեռքը յանձնէ, կիները անգաւակ ու որբեւայրի ըլլան, երիտասարդները սուրով զարնուին: Տէր Դուն գիտես անոնց դաւը: Տարօրինակ արտայայտութիւն, յաճախ նաեւ ոչ քրիստոնէական: Բայց երբ Աստուածաշունչ մաքեանը կը կարդանք, որուն մէջ նաեւ Նոր Կրակարանը, ապա այնպէս եւս կը գտնենք այսպիսի արտայայտութիւններ. օրինակ Գործք 7:60, 8:20, 23:3, Գաղ 1:9, Բ Տիմոթ 4:14: Արտայայտութիւն մը, որ խորքին մէջ ուղղուած է Չարին, որ կը գործէ մարդոց մէջ, մարդոց ճամբով: